ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2012թ. հոկտեմբերի 9 թիվ 100 -Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի N 1202-Ա որոշման 7-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի N 01/11.3/10330-12 գրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N 1/6.2-1/12893-12 գրությունը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի ղեկավարի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N 02/14/5187-12 գրությունը. ***կարգադրում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարածքում ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու, գործունեություն իրականացնող գործատուներին մինչև 2012 թվականի նոյեմբերի 30-ը նույնականացման քարտեր /էլեկտրոնային ստորագրություններ/ հատկացնելն ապահովելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

Ա.ՄԱՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2012թ. հոկտեմբերի
9-ի թիվ 100 -Ա կարգադրության

ԿԱԶՄ

Աշխատանքային խմբի

Ս. Սահակյան – ՀՀ Արագածոտնի մարզպետ /խմբի ղեկավար/
Ա. Արսենյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ. Գևորգյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Ն. Գալստյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Ա. Բասենցյան- ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Ս. Հովսեփյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
Պ. Համբարձումյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Ե. Բաղդասարյան – ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչության Արագածոտնի մարզի տարածքային կենտրոնի առաջատար մասնագետ
Մ. Ասլանյան – ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Աշտարակի տարածքային հարկային տեսչության տեղեկատվության և վերլուծության բաժնի պետ
Ա. Ալեքսանյան – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության հարկային քաղաքականության բաժնի առաջատար մասնագետ
Ն. Բարսեղյան – ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի ավագ դպրոցի տնօրեն

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ